Վասն եթէ՝ մի՛ ոք ՚ի քահանայից կամ ՚ի ժողովոց զեկեղեցւոյ գաստուան առ մարմնական իշխանս գաւառացի, կամ առ այլազգիս կամ առ քրիստոնեայս, զի մի՛ գաւառապետացի յառաքելական և ՚ի կանոնական հրամանացն· որպէս և գրէ Պօղոս առ կորնթացիսն, թէ իշխէ ոք ՚ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերսն իւրում գաւել առաջի անհաւատից և ոչ առաջի սրբոց· և հարկն առ իրէք ՚ի քահանայից ուսանել հրամայեն ՚ի քահանայապետէն թեենէ՝ որ զայս առնէ։

Վասն եթէ՝ մի՛ ոք ՚ի քահանայից հոգաբարձու քաղաքի կամ գեղջ լինիցի, կամ գաւառապետ՝ աշխարհական իշխանաց, կամ գրօղ հարկաց կամ տակից, կամ յայլ ինչ գործակալութիւն աշխարհի լինելով, Կանոն անկարելի է ըստ աերկնական հրամանին՝ երկուց հակառակ տէրանց ծառայել և հաճոյանալ, ասէ ան՝ որ է եկեղեցի ան կենդանի, և ասէ աշխարհական։ Ո՛ տանուրց ընտրեացէք այնպիսին ՚ի մէնջ ՚ի քահանայ կալ, կամ ՚ի քահանայապետ՝ հակառակ հոգաբարձութեենէն կամ ՚ի քահանայական գործոյն. իսկ եթէ ընդ աշխարհական հոգոյն կանգնի և զքահանայական պատուհասն ունել և զառեւտրականն ուժիւն ժողովրդոց, զոմանս ի նոսանէ և ի նոսանէ ասէ ան՝ որ է եկեղեցի ան կենդանի։

հրամանաւն ՚ոյ և մերս որ և գաւառեցոց է այնպիսին ընդ կրկին յանդգնութեանն ։

Ոչ սեմք զամանց քահանայից ձիաւարժս լինել և զէ- նըս առնուլ ըստ զինուորաց, և՚ի խրախճանութիւս խա- ղոց ձիընթացից ընդ նոսին արշաւել երիվարօք և ՚ի չոր երէց և ՚ի նետաձգութիւնս և յամենայն ինչ յայսպիսիս, որ նոցայն գործ է ամէն և ոչ ե- կեղեցւոյ սպասաւորաց, զի զէն զինուորութեան ու- րոյ ոչ է մարմնաւոր, որպէս հրամայէ առաքեալն, այլ հոգևոր և ՚ուժական, որովք պատերազմիմք ոչ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւս և ընդ պետութիւնս ընդ այս խաւարութեան՝ որ ՚ի գեղջոյ երկնից ։

Ո՚չ ՚ուրուք՝ աղաչեմք ՚ի բաց լինել յայսմհետէ ՚ի յանկարգ սովորէ աւուր, և բայց թէ ՚ի ճանա- պարհի, եթէ ՚ի հետոտոս և թէ երիվարաւ՝ առնուլ զէնս յաղագս երկիւղի ինչ եղելոյ կարծեաց, և այն՝ պարկեշտութեամբ և ոչ ըստ զինուորութեան կար- ի՚ կապարճիւք և կամ կազմելով աստերաւ ։

Ա՚յլ ոչ ևս է արժան առնուլ զէնս կարգաւորաց, կամ արշաւանս առնել երիվարօք ըստ մանկական բարուցէ՝ ՚ի բամբասանաց պատճառս տեառդոց ։ Ո՚չ զայս խրատեմք վայելուչ զբաղումն, այլ՚ինքն- զինքեան հաւասար և զգործս բարեաց, և նոքօք կատարել ընդ բնութեան մերոյ թշնամւոյն ։ Էկ ար- ժան զխաւարայինս զայս զէնս առանալ յանձին և արատերասզիլ առքօք ընդ հանդերձից մերոց մարդ- կան, կամ խոցոտել զանբանից կենդանեաց հոգւո

և կամ սիգաքայլ երիվարօք յօրանալ, քայց թէ
ի սակառելենէ. քանզի յայտնէ և ի տգիտու-
աեացն արգելուն զմեզ ՇՃայինն պատուիրանքն։

Վասնոյ՝ եթէ զոք ի ժողովրդենէ նշանի վր
պատուիրանացն լինելոյ ընդ քանիս առնից, և
նորա յամառեալ ՃԱայ ի յանցանն և ոչ դա-
նայ, այլ ոք ի քահանայից անտի մի՛ իշխէցէ ըն-
դունել զնա յեկեղեցի իբր, որպէս տուեր են ամենք
ի սկզբն քահանայից յինքեանս ձգել զայնպիսին,
և որ զայս առնէ,նա տայ նման ի մեղաց անտի անդարձ
լինել ։ և զանձն իւր կցորդ պատուհասի յանցանաց
նորա առնիցէ։

Ա՛յլ վասն այսպիսի երից եղելոց այս օրինք հաս-
տատեցի ի միջի ձերում, զի զտրտշեալն ի մէջ
քահանայիցն ընկալցին զնա սիրով ըստ
Ա՛յս օրինք ուղղութեան և ի մէջ Նախկուտ-
ասց Հաստատեցի, որպէս զի զամ մէջ եպիսկոպո-
սին բանադրեալն ի քահանայից կամ յաշխարհա-
կանաց, այլ ոք յեպիսկոպոսաց ոչ ունի իշխանու-
թիւն, քայց ի բանադրեալն անտի ։

Վանդեմք և զայս ևս պատուիրան ամուրեաց քահանայիցդ՝ որ ըստ աշխարհի, զի որում չ՚ի մանկական հասակին հասանէ վախճան ամուսնոյն, թէ կամեսցի զոք ի նա ապրեցուցանել չ՚ի մեղաց և չ՚ի բամբասանաց և տալ ընտրելոյն արժանաւորա- պէս ամուսնել, հրաժարեալ յաշխարհէ՝ ըստ կանոնական հրամանին չ՚ի կարգ կրօնաւորութեան մտանէ. զի չ՚ի մէջ աշխարհի ամուրեաց ընդհատել լինելով չ՚ի սեւութենէն և չ՚ի խոտակցութենէն ընդ կանայս, մանաւանդ՝ խոստովանութեան նոցին լինել ընդունօղ ըստ օրինի քահանայութեան, անկնար է արեւ ծառայել ալ. ապա թէ ընդ անձուկ չա- նապարհն գնալ դժուարանայ՝ զկայնն և զարբաղին տեսեալ, ըստ արժանի է նմա չ՚ի սրբոյ պատարագին ամուրեաց վարուց:

Իսկ որոյ մերձ չ՚ի ծերութիւն հասանէ վախճան ամուսնոյն, և վասն լինի յանձն իւր սրբութեամբ և անարատ վարուք և առանց բամբասանաց ապա- ստատել ալ, որպէս զի գովութիւնս ընկալցի չ՚ի տեառնէ և մի՛ բամբասանս. այնպէսին կացցէ յե- կեղեցւոջ իւրում ոլորան ախտիժէ:

Եւ արդ՝ քահանայիցդ առ ի խրատ՝ զոր գրեցաք տակաւուրք, ոչ իշխանաբար հրամայն տալով, այլ ծառայակցապէս աղաչելով, բաւական լինի առ ի վէրջ. խոկ զպակասեալն ի մերոցս՝ ունիք համառօտել կատարեալապէս ի հարցն առաջնոց կանոնական գրոց՝ որովք օրինադրեցին զմանկունս եկեղեցւոյ ի փառս աստուծոյ։

Ա՛ Իշխանս՝ որ քան աշխարհն։

Փութիւեացուք զնծայլին պատուհրանացն խրատ և առ ձեզ՝ որ ըստ աշխարհի ունիք զքահանայութիւն։

Եւ նախ և առաջին առ իշխանսդ՝ որք ինձանէ ղեալ ժամանակիս տիրէք ի տեղիս տեղիս բազմաց և կամ տակաւուց, զօրաց և գաւառաց։

Ո՞զրս աղաչեմ, մի՛ անհնազանդ լինիք օրինացն ոչ. այլ որպէս կամիք, զի ծառայք զկամս հրամանդի ձերոյ հնազանդութեամբ և անթերի կատարեցեն, որք թէ և զմի ինչ ի հրամայեալոցն անկատար թողուն, պատուհաս կրեն ի ձէնջ. նոյնպէս և դուք վասն զի բնութեամբ ծառայք էք այլ, ծառայեցէք տեառն երկնից և հնազանդութեամբ, զի մի՛ պատուհասիցիք իբրև զապստամբեալս ի տեառնէ, այլ որպէս զմեծերիմ ծառայս՝ պատիւ ընդունիցիք խրկնաւոր թագաւորէն։

Եւ արդ՝ առաջին զայս պատուիրան առանդեմք ձեզ, մի՛ անխուսափար վարիք առ հնազանդելոյ

ծանր և դժուարակիր հարկադրութեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք և լաւ չափ զօրութեան զիւրայոյզ ոք. զմեռա՛ւ ածէք, զի և ձեր տէր գոյ յերկինս, և ակնառութիւն ոչ է առաջի նորա, որպէս և առաքեալ ասէ:

Ա՛ր ըզք զկէտ՝ ի մարդկանէ, և մի՛ նեղէք զաղքատս և զանանուկս, զի մի՛ բողոքեսցեն առաջի այ վասն ձեր, և առաւաւտ լսէ նոյա՝ լաւ իմաստնոյն առակէն, զի առ թէ՝ մի՛ առաւ պատճառս աղքատին անիծանել զքեզ, զի մի՛ արարիչ նորա լսէ ցէ նմա, և հատուսցէ քեզ չարիս:

Ա՛ր չար և անիրաւ գոյժ առնէ և գաւառասէր առս կատարածանէք ի վերայ աշխատողի ձերոյ, զի մի՛ յանիրաւութէ նոցա, զոր գործեն, դուք գաւրք դատէք գործակատարս ընտրեցէք ունել ի վերայ մարդկան զգործակատութիւն, զի մի՛ զարքունական առհասարակ նեաւ իրաւունս՝ վաստակաւորացն թողցեն վասն առատ կաշառացն զբաժանումն, և կամ ինքեանք գողանայն. և մի՛ առաւել քան զկրամայեալն նեղեցեն զեղն զինուս և առցեն, զի անիրաւութիւն ենթարկու կողմանքն առաջի այ. այլ այնպէս իրաւագատաս լինի՛ցին, զի առցեն զկայսերն՝ կայսեր, և զայն՝ այ:

Ա՛ր չար անիրաւութեամբ գատաւոր, այլ ուղիղ գատաստան արարէք, զի և ձեր գատաստանն քաղցրութեամբ լինիցի այ և մի՛ խստութեամբ. մի՛ վն կաշառաց կամ վասն սիրելութեան մերոյ կողմանն, կամ վասն ատելութեան և ոխակալութեան կամ

վասն պատուոյ երեսաց՝ և մինչև աչառելով՝ զանձն
բանս արդարացուցանէք և զաւասանին, և զար-
գարեն Թուլեկք զիրաւունս, զի մի անիծից օրհ-
նացն ես՝ որ յաղագս այսորիկ, պարտականս զանձն
նըս առնիցէք։

Ա՛ի անտես առնէք զայրուցն և զաղքատին զի-
բաւունն, յորժամ աղաղակեն առաջի ձեր վասն
զրկութեաց իւրեանց, այլ զոյս արարէք ոլջոյն և
տուք իրաւունս այրուցն, ոչ առ առաջս մար-
գարէին. և ունկնդիր լերուք աղաղակի նոցա, և
փրկեցէք զնոսա՝ ի ներչից իւրեանց, և չյարիշտա-
կեալ լինջս նոցա զարձուցէք յանիրաւացն, յայն-
ժամ և ձեզ լսող լինի աղաչանաց ձերոց և կատա-
րէ զխնդրուածս սրտից ձերոց։

Ա՛ի որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ
ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմար-
դիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձերով լինին՝ ի զոյժ
խիստ և անտերելի, ոչ և փարատօն զարդիկն իրա-
ւել, և զայն առանց կերակուր տալոյ նոցին, այլ
ներելով և քաղցրութիւն և տակաւրեայ ժամանա-
կաւ, և առատագոյն կերակրօք լցուցանել զին-
ս յաշխատութիւն անդր, և չարիով և ի յանչախս,
ոչ զի կարօղ լինիցին վաստակօք իւրեանց զաղքա-
տանաց կեանս զոսոց և զարդուց իւրեանց լցուցա-
նել, և զարքունական հարկան հատուցանել։

Ա՛ի զիարձս վաստակաւորաց ձերոց հատանէք
իշխանաբար, որպէս զայնոցիկ՝ զորոց ամբաստանեն
առաքեալքն և մարգարէքն թէ՝ զրկեալն ի ձէնջ

աղաղակէ , և բոլոք հնձուղացն եհաս յականջս տեառն զօրութեաց ։

Ուստի լեզի ձեզ , զի վաստակօք նոցա մեծա- նայք , և առաւել , քան զչարին վարկանայք , և այն զի ոչ ինչ՝ այլ բնութիւն է նոցա , և այլ ձեր ։ այլ ի միոյ կաւոյ և ի խառնուածոյ ։ քանզի նմանա- պէս է տերանց և ծառայից՝ փարթամաց և աղքա- տաց՝ ակնիզն գաղտ յաշխարհ և կաւատրած եւթին յաշխարհէ ։

Ա՛յ զի զգաստասարտ ամքն ծննդեամբ մտա- նեն յերկիր , և մահուամբ եւանեն ի ոմանէ . խակ մեծութիւն և փոքրկութիւն , բարձրութիւն և խոնարհութիւն , բարեբախտութիւն և պանդխտու- թիւն , ի միջ ծննդեանն և մահուանն պատահեն մարդկան , որ են իբրև զերազք զարթուցեալոց , ոչ ի փորձոյ անտի յայտնի է ամքն իմաստնոց և տգիտաց , զի ոչ ինչ ի տգիտէ ունի զհատուցու- թիւն ։

Ա՛յ՝ մի՛ վասն անցաւորիս կենաց կորուսանէք զյաւիտենական զկեանն , զի թէպէտ և քրիստոս դժուարաւ առաց մեծատանց յաղքայութիւն երկ- նից մտանել , ըստ օրինակի ուղտոյ ընդ ծակա- ղան , այլ եթէ զմեծութիւն ձեր ըստ կամացն ոչ ի գործ արկանէք , դժուարինն՝ ձեզ դիւրին լի- նիցի ։

Օ՛ի և աբրահամ մեծատուն էր , և ոչ միայն աղքայութեն մտանելոյ արժանացաւ , այլև գոգ նո՛ր աղքայութիւն առաւծոյ եղև և անուանեցաւ , և

հանգիստ ամենայն արդարոց. նոյնպէս և յոբ և Մով
սէս ծառայեն արդարութեան՝ ըստ ասելոյն Տ՛ի առեալ է
առաքինիցդ զաբրահամ և զիսահակ և զյակոբ և
զամենայն արդարոն յարքայութեան իւր։
Վայ քեզ և զուք՝ եթէ ըստ նոցին օրինակի գնայք
Տ՛ի ձանապարհս արդարութեան. և ոչ զուք նեղէին,
ոչ զուրուք զինչս յափշտակէին, և ոչ ումեք անի
րաւութիւն ինչ առնէին և կամ նենգութիւն, այլև
քրեանց արդար վաստակոցն գ՛ջաղցեալ կերա
կրէին, զմերկս զգեցուցանէին, զհիւրս ընդունէին,
զկաթսայութիւն կարօտելոց լցուցանէին, նեղելոց
բառնային լինէին, և տկարաց զօրացուցիչ, զաղքա
տըն և զտնանկն ոչ մինչն ինքեանք ոչ նեղէին,
այլև վրկէին Տ՛ի ներջաց խրտանց։
Եւ ոմն ոչ եղև նոցա մարմնաւոր փարթամանալ
արգել և խաչիան ժառանգելոյ զարքայութիւնն
երկնից. նոյնպէս և ոչ ձեզ լինիցի պատճառ չա
րեաց՝ մեծութիւ, եթէ կամիցիք արդարութեամբ
վարել զդա, որպէս և նոքա, այլ մանաւանդ քան
զայս աւելի լինի ըստ խմաստնոյն, զի ասէ. Թէ վրդո
վանք առնէ՝ մեծութիւն իւր։
Իսկ այն՝ որ փոխանակ զիւրն տալոյ կարօտելոյն,
զնոցայն յափշտակէ, և կողոպտէ զնոսա, և փոխա
նակ հիւրընկալ լինելոյ, և հանգուցիչ աշխատելոց
Տ՛ի ձանապարհի, զոլակից լինի գողոց և զաւրանակալ
Տ՛ի ձանապարհի այնոցիկ՝ որք անմեղութեամբ գնան
ընդ ուղիղ ձանապարհս իւրեանց, և զաւուն իւր
յանիւրաւ առացուածոց անտի ընդ և մեծանալ

կարծէ։

Անտրէց առել զանթուղէն յանցանք, որք ոչ միայն զինչան յարիշտաւէն, այլ զարմն անասնացն հե՜ղուն, զի ոմն զատատաղ լինելոյն յարիշտակոյաց ընդ էից խաբեանց, և զայն ոչ ածեն զմոտա, եթէ այլ գատաւոր կայ գիտօղ ամի, յորմէ ոչ կարեն թա՜ քուցանել զգաղտնիս չարեաց խաբանց։

Յաղագս այսպիսեաց մեծատանց յիրաւի հրա՜ մայէ քրիստոս՝ զժուարաւ մտանել յարքայու՜թիւն երկնից, որոց ոչ արքայութիւն է օթեվան, այլ հու՜ պեհեղին, և առանձական՝ որդն անքուն և աւրտա՜ նան յաւիտենական։

Ո՛չ այս յիրաւի, զի թէ որք խաբեանց արդար ընչիցն ոչ կերակրեն զքաղցեալսն և ոչ զգեցու՜ցանեն զմերկս և ոչ ժողովեն զօտարս, լսեցից են՝ զի քրիստոսէ յաւուր դատաստանին, եթէ երթայք ինձանէ անիծեալք՝ի հուրն յաւիտենից. ապա որք աղքատին առաւել քաղցի լինին պատճառ և տա՜ ռապելոյ մերկութեան և օտարին կորստեան ընչի՜ ցըն և անձին, և ի հոխանակ զբանդարկեալսն տես՜ նելոյ և մխիթարելոյ բանիւ և արդեամբք՝ արգա՜ կելոց անմեղաց բանդից և կատանաց լինին առիթ, ո՞ւր արդեօք իմանի տեղի և չափ տանջանաց այնպի՜ սեաց, եթէ ոչ ընդ սատանայի և հրեշտակաց նո՜ ցա, զորոց և զիւանն կատարեցին։

Ո՞վ ոչ սաստիմ՝ զի զոյց լինել ամբոխն ձեզ՝ի կո՜ րստի զպատճառս մերկացն և քաղցելոց՝ ասելով, զի եթէ ոչ

զրկեմք և ոչ յափշտակեմք, զիշխանութիւն ոչ կարեմք հաստատուն ունել։

Եւ սա այս՝ առաջին զայս սակս, զի թէ անկարելի էր որոց զիշխանութիւն ունին՝ հաճոյ լինել այլ, սակս զիարդ բազումք ի թագաւորաց և իշխանաց զովեալք եղեն այլ և մարդկան, որք և իշխանք ի դէրս աբան։

Վտարձեալ՝ թէ և անհնարելի էր ըստ սակս զեր առանց զրկանաց իշխանութիւն վարել, սակս որ իմաստունն է՝ փախչել արժան էր յանցաւորիշխանութենէն, և ոչ վասն այնորիկ անանց սակս ընդ ընդ սատանայի սակս։ Քայց՝ ոչ է անհնարին առանց անիրաւութեան վարել զիշխանութիւն, այլ դիւրին և հեշտալի՝ որք սիրեն և կամին, և մեք վկայեմք սակս այլ և երաշխաւոր լինիմք ամենեսեան։ Ոչ եթէ որք զսուն իւր մաքրեցան ի զրկանաց, և զերասմբք սատգուածս միայն ժողովեցան և ի վեցկ անդ, թէ և սակս թուի թէ էցէ, սակս զհաճեկան լինիցի և պատճառ հարստութեան, քան զբաղումն անիրաւաբար սատգեալս։ Եւ զայս իմաստուն ոմանն սաղմոսն յայտ արարեալ սակ, թէ անէծք սեաւն ի սուսս ամբարշտաց, յորկք արդարոց օրհնին։ քանզի սակս ինչ անիրաւն զբազում իրաւամբք սատգեալն՝ նմանի հրոյ կիզչ և սպսականէ, զի անիծիւք և դառնութեամբ է ժողովուածն անիրաւին ի զրկելոց անտի, և ընդ սաղքատացն անիծից և այլ անէծքն մտանեն ի սուսս զրկողացն։ Իսկ սուսն արդարոյն, զի սուրբ է ի զրկանաց և

կերակրել ի քաղցեցից, ընդ օրհնութիւնս սղքա-
տացն և այլ օրհնութիւնն մտեալ ի ծածուկ և ան-
յայտ զսակաւն բազմացուցանէ, որպէս զասրեվ-
թացի այրուցն և զսումացուցն և զորս տէրն կերա-
կրեաց յանապատին:

Եւ ոչ միայ ոք յանմտաց և ի մարմնասէրաց զբազում
ինչս տեսանելով զրկութեանց և ամբարշտաց և զսա-
կաւս որոց իրաւամբք ստանան, այսպանիցէ զբանիւք
մերովք, այլ լուիցէ այնմանիկն ասացեալն մարգարէին
Դաւթի՝ զի ասէ, լաւ է սակաւիկ ինչ արդարոյն
քան զբազում մեծութիւն մեղաւորաց. նոյնպէս և
արդոյ նորին առաքելոյն, արդարոյն ասէ առնոյն
աշխարհս լի է ընչիւք, իսկ առբարշտին և ոչ դանդ
մի. և դարձեալ՝ լաւ է առ քանջուրդք կերակրիլ
հանդարտութեամբ, քան մեծամեծ գերնդեօք առ-
տութեամբ: Եւ յիրաւի է այս, զի ոչք յիրա-
ւացի և յարդար ընչից իւրեանց կերակրին, ոչ
ինչ կրեն պատիժս ցայս. իսկ այնք՝ որ ի զրկանաց
կամ ի գողութենէ և ի յափշտակութենէ ընտա-
զաւորեան իւրեանց, զամենայն՝ զոր առաստատին վա-
կերեն յայլոց իրաց, տակաւրեօք առնին հատուցանել
և դառնապատին առաւ:

Այլ և զպատճառն հատուցանէ լուծանէք ի ձուկն և
ի գինի եշխանարարն, զի միւ ընդ անժուժկալին դա-
տիցէք:

Վասրձեալ և զայս ասեմք, զի տուրքիւն և խա-
բէութիւնն՝ զոր գերիստոս հրամայեաց թէ ի չա-
րէն է և ի սատանայէ, թէպէտ և ամենայն մարդոյ

ՀԱՍԱԿԱՑՐ Է, ԶՍՊԱ ԱՌԱՒԵԼ ՄԵԾԱՄԵԾԱՑ ԵՒ ԻՇԽԱ-
ՆԱՑ, ԶԻ ՓՈՔՐՆ՝ ՎԱՆ ԶԻ ԱՆԶՈՐ Է, ՉԱՆԱՅ ԱՌԱՔԵՆ
ԶԲԱՆ ԻՒՐ ՀԱՒԱՍԱՏԵԼ ԵՒ ՀԱՒԱՏԱԼԻ ԱՌՆԵԼ. ԻՍԿ
ՄԵԾՆ ՔԱՆԶԻ Ո՛Չ ՀԱՒԱՏԱՑ ԻՒՐ Է ԱՌՆԵԼԻՆ՝ ԶՈՐ ԿԱՄԻՑԻ,
ԻՇԽԱՆԱԲԱՐ, ՅՈՐԺԱՄ ՀԻՐԱՒՈՒՆԱՆ ԱՐՀԱՄԱՐՀԻՑԷ:

Ա՛ՀԱՐՁԵԱԼ՝ ՌԱՄԻԿ ՄԱՐԴԻՑ՝ ԵԹԷ ԱՌԱՔԻՒՆ ԻՆՉ
ԻՍԿ ԵԹԷ ԱՅԼ ԻՆՉ ՎԱՍՏԱԿԱՒՐ ԻՒՐ ԳՈՐԾԷ, ՈՉ ԼԻՆԻՍ
ԱՅՆՔԱՆ ՅԱՅՈՆԻ, ԵՒ ՈՉ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԱՀԱՒԱՏ ԼԻՆԻՑԻ.
ԻՍԿ ՀՈՒՇԻՆ ԵՒ ԶԻՐՈՒՔՐ ՄԻ ԱՀԱԼԱՆՔՆ Ի՛Ր ՀԱՅՀՈՅՈՒԹԻՒՆ
ԵՒ Ի՛Ր ԹՇՆԱՄԱՆԱՑ ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵՆ ՄԵՐՁԱՒՈՐՔ ԵՒ
ՀԵՌԱՒՈՐՔ, ԱՅԼԵ ՍԻՐՈՂՔՆ ՉԱՐԻ՝ ՕՐԻՆԱԿ ՉԱՐՈՒԹԻՒՆ
ԱՌՆՈՒՆ ԶԱՒ Ի՛Ր ՄԵԾԱՄԵԾԱՑ ԵՂԵԱԼ ՊԱՏՈՒՀԱՍ-
ՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԻՆՉ:

ԱՒ ՅԻՍ ԱՂԱՉԵՄ, ՄԻ՛ ԵՂԻՑԻ ԱՒ ՁԵԶ ԲԱՆ ԽԱԲԵ-
ՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՒՈՒԹԵԱՆ, ՄԻ՛ ԱՒ ՁԵՐ ՀՆԱԶԱՆԴԵԱԼԱՆ
ԵՒ ՄԻ՛ ԱՒ ԱՐԱՒՔԻՆԱՆ. ԱՅԼ ՈՐՈՑ ԽՈՍԱՆԱՑ Ք ԲԱ-
ՆԻ ԶՔԱՐԻՍ՝ ԶՆՈՅՆ ԵՒ ԳՈՐԾԱԿ ԿԱՑԱՐԵՑԷՔ, ԶԻ ԱՅՆ
Է ՀԱՃՈՅ ԱՒԱՋԻ ԱՒՈՒԱԾՈՅ ԵՒ ՄԱՐԴԿԱՆ, ԵՒ ԳՈՎԵ-
ԹԵԱՆ ԱՊԱՒՃԱՒ ՁԵԶ ՅԻՄ ԲԵՐԱՆՈՅ:

Ա՛ՒԱՒ ԶՁԻՆՈՒՈՐԱՑ ՁԵՐՈՑ ԵՒ ԶՅԱՄՑԱՆ՝ ՈՐՔ ԾԱ-
ՌԱՅԵՆ ՁԵԶ, ԶԱՀԱՄԱՆԵԱԼ ՀՈՒԳԱՆ ՄԻ՛ ԱՊԱԿԱՍԵ-
ՑՈՒՑԱՆԷՔ, ԶԻ ԶՐԿԱՆՔ ՄԵ՛Ծ Է ԱՅՆ ԵՒ ԱՆԻՐԱՒՈՒՆ.
ՔԱՆԶԻ ՈՐՔԷ ՆՈՔԱ ԱՊԱՐԱՒԱԿԱՆ ԵՆ ՎԱՆ ԱՐԱՐՈՂԱՑՆ՝
ՈՐ Ի ՁԷՆՋ, ԶԱՐԻՒՆ ԻՒՐԵՆՑ ՀԵՂԱԼ ՎԱՆ ՁԵՐ,
ՆՄԱՆԱԿ ԵՒ ԴՈՒՔ ԱՊԱՐՈՒԻՔ ՁԵՌԱՒԱՑԵԱԼ ԹՈՂԱԿԱՆ
ՆՈՑԻՆ ՀԱՒԱՏԱՑԱՆԵԼ ԱՆԹԵՐԻ:

Ա՛ՒԱՒ ՄԻ՛ ԻՆՉ ԲԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՒԵԼ ՔԱՆ ԶՋԱՒԻՆ
ՊՆԱՅՔ ԱՌՆՈՒԱ, ԶԻ ՄԻ՛ ՅԵՐԿԻՒՂԵ ԿՈՂՈՊԵԼՈՅ ԵՒ

Ֆանրագոյն ինչ հարկ լինիցի երդնուլ, մի՛ ոք մե՞ղիցէ զանթողուլն յանցանան՝ ուրանալով զերդմունն և երդմնապաշտից լինելով, զի առաւել չար է ուրացութիւնն՝ որ երդմունանէ, քան զայն՝ որ երկիւղէ մահու առաջի անհաւատից ուրանան. քանզի այն ի բռնութենէ է և երկիւղէ տանջանաց և մահու, և այս՝ կամաւորութեամբ և վասն սակաւ ինչ կարօտական շահի, և է զանազանութիւն մեծ՝ որպէս կամաւ մեղքն և ակամայ.

Եւ ոչ միայն առ հաւատակից քրիստոնեայս պարտ է առանց սուտ երդմունն պահել զերդմունան, այլև առ այլազգիս, և մանաւանդ առ նոսա առաւել, զի մի՛ անուանն այլ և հաւատոյս քրիստոնէութեան պատճառ լինիք հայհոյելոյ ի նոցանէ. զի թէ կռապաշտ թագաւորին Բաբելացւոյ երդմնապատիժ լինելով հրէիցն, մանուեաց առաւել զբարեգործութիւնն և զարգն ի ձեռս նորա. քանի՞ և ի նոսա պատուհասեսջիք ձեզ զայնոսիկ՝ որք առեն և ուրանան զերդմունան՝ որ առ նոսա;

Եւ մի՛ ոք զայն առաջի դիցէ, եթէ վասն զի նոքա առեն երդմանցն՝ որ առ մեզ, պարտ է՝ զի և մեք առ նոսա զնոյնս արասցուք, այլ էջ մեր ելդումն և նոցայն հաւասար, զի մեր առ Աստուած տուիցէ և նոցայն ոչ նոյնպիսի: Այլ և մեք որպէս զձառայս գիտօղ կամացս տեառն իւրոյ և ոչ արարօղ՝ բազում ընդհարմամբ գանա, և նոքա որպէս զաջիւս՝ սակաւս;

Վարձեալ աղաչեմք, մի՛ առ բարկութեամբ շարժելով

և ոչ ուղղադատ իրաւամբք, կամ իրաւս ինչ առնէք մարդոյ կամ մահու վճիռ տայցէք. քանզի նոքա օրէնքս ոչ հրամայեն զայսոսիկ, և հին օրէնքն թէպէտ և հրամայեն, բայց ոչ վայրապարշապար, այլ ըստ յանցանացն արժանաւորութեան զէս-դատաքանչէս-դան դատել՝ ի իրաւս և՝ ի մահ։

Ա՛յլ և դուք՝ որ յիշխանութիւն կաք, թէպէտ և զնոր օրէնքս անկարելի առնէք պահել, զհին օրինացն հրամանս՝ որ վասն այսպիսի իրաց է, կատարեցէք, կամ եթէ առանց օրինաց դատիք զմարդիկ առնելոյ ի՛նքեանց ոչ տալոյ ի՛ նմանէ զբաղցրութիւն և զբարերարութիւն, ըստ առեալն թէ՝ մի՛ դատիք և ոչ դատիցիք, մի՛ պատժէք, և ոչ պատժիցիք, զի որով չափով չափէք, չափեսցի՛ ձեզ։

Ա՛նաւ զայս և ա պատուիրան աւանդեմք ձեզ մի՛ լինիք վրիժառուք և քինախնդիրք, որով զիշխանացն իչ լի նախատէ մարգարէն եսայիաս, այլ ըստ հրամանին քրիստոսի ներող և երկայնամի՛տ լերուք առ առնեսեան՝ որ մեղուցեալ իցեն ձեզ, զի և դուք ընկալջիք առ ի նմանէ զքաղցրութի՛ն և զբարերարութիւն, ըստ առեալն թէ՝ մի՛ դատիք և ոչ դատիցիք, մի՛ պատժէք, և ոչ պատժիցիք, զի որով չափով չափէք, չափեսցի՛ ձեզ։

Խօսիմք ըստ կարգի և առ դասս զհինուրացդ՝ որ ընդ ձեռամբ էք իշխանութեանց և պետութեանց։

Ա։ Նախ և առաջին՝ զառաքելականն առ ձեզ բարբառիմք քան, որ պատուիրէ ձեզ՝ հնազանդել լինել առերանց ձերոց՝ յիսուի. ի՛ առ ականէ ծառայել՝ որպէս մարդահաճոյք, այլ իմաստութեամբ որպէս ստոյ։ Օ՛ի և այնմ ասէ՝ տէր կ՛ հաստոյ նօղ, այսինքն թէ՝ որ հաստատմութեամբ ծառայէ այնմ՝ ընդ որոյ իշխանութեամբ անկեալն կ՛, թէ և՝ ի նմանէ պակասուի ինչ լինելով ինքեան, ի՛ առէ տումեացի, զի ա՛ծ կ՛ որ հաստոյանէ նմա փոխարկեսցէ բարեաց՝ ըստ ուղիղ վաստակոց իւրոց։

Ասէ որ նենգաւոր գտանիցի բանիւ կամ գործ, կամ անձին տեառն իւրոյ կամ տեղւոյ առականի նորա կամ ընչից նորին, ա՛յ կ՛ այն նենգաւոր թիւն և ոչ մարդոյ. և յայ ընդունելոյց կ՛ զվնասհաստոցման չարեաց իւրոց, որ և՝ ի հաստատն ուսցէ կ՛ այնպիսին և չար քան զանհաստատն կ՛. քանզի նոքա թէպէտև՝ ի չհմարիտ հաստոյ կ՛ քինաց ա՛յ մարդեաւք են, բայց զհնազանդութիւն տեառնց իւրեանց և զմտերմութիւն՝ հաստատուն բեն յանձին։

Ա։ զի՞նչ առեմք առ քրիստոնեայ իշխանն՝ ո՞

նել միամտութիւն և սէր, յայտնի և ծածուկ. այլ թէև ՚ի քրիստոնէից ոք ընդ այլազգւոյ է իշ. խանութեամբ և ՚ի նուիրն պարգեւաց կերակրի և զգեստու, զնոյն հաւատարմութիւն պարտ է ցուցա նել նմա, և զատանց նենգութեան ծառայութիւն; օ՛ի և յորժամ զնէր զայսոսիկ առաքեալն պո ղոս, թէ ծառայ՛ք՝ հնազանդ լերուք տերանց ձե ցոյց, ոչ եթէ քրիստոնեայք էին տեարք ծառայի ցին, այլ կուռապաշտք։ Նայց այսու յայտնի կամեցաւ ցուցանել հեթանոսացն զշնորհուս օրէնս քրիստո նէից, եթէ առել է օրինաց մերոց՝ նենգութիւն տերանց, և սիրել է հաւատարմութիւնն, զի մի՛ բռնս հայհոյութեան օրէնս և ՚ի հաւատս մեր խոտեսցին, յորժամ ՚ի քրիստոնէից զոք տեսցեն անօրէնս գտեալ առ նոսա։

Եւ եթէ կարծիցէք ՚ի տէրանց ձերոց ՚ի գործ վերակացու՞ձեան, կամ առաքինէք ՚ի անօրէնու՞թենէ ինչ բան, արդարութեամբ և իրաւամբք առ հնա զանդեսցեն վարեցարո՛ւք. մի՛ զոք ներելով անո ղորմաբար արուեստից իրաւանց, և մի՛ զնչք զերծար տելով անկարեկից բնութեամբ՝ ցուցանելով զձեզ առ նոսա օրինօք դահճաց, և մի՛ առաւել քան զերանայեն ընձեզ առնիցէք՝ ըստ սրբոյ Պետրոսի խրատու՝ սու, այլ Թուշակօքն ձեր բաւականաւորի՛ք, և սղոյ՝ մութ և սիրով գնացէք առ ամէն, զի և զտեառ ն՝ ղորմութեան ոչ ինչ յայտագոյն զինչ ոք ընդունի՝ քան զհնազանդութիւն առաքինեալ ազնուագունդ

պէտք պահել զպատուիրանս այսոցիկ զսուրբ պա-
հըս անօրինաբար լուծանէքդ զայսոցիկ զչափաւորէն
ընչից աղքատաց և զանպատրաստ արեանց հեղմունս ոչ
ունել համարիք, զի քան զ՚ի հատուածոց պատերազ-
մական տպանմանցն՝ ունք հրամանաւ Թագաւորացն
լինին, այլոցն՝ որ՚ի ձէնջն լինին, առնեցուն համա-
րըս պահանջելոց ի՚ի ձէնջ ամ ծանր և անտանե-
ղապատասխանատու։

Արդ քանզի և զայլ հատուածոց ժողովրդականաց
ձեզ առաւել պատրաստ է երկնչել յոյժ և զպատուի-
րանս նորա պահել. զի յառնական ժամ ընդդէմ
պատուոյ Թշնամեացս ունիք պատերազմիլ։

Ա՛յլ առաւել քան մարմնական զինուք՝ հատա-
ւոյ զինուն վառեցարուք, այսինքն՝ ամպարշտութիւն և
անօրէնութեամբ և սրբութեամբ, պահօք և աղօ-
թիւք և ողորմութեամբ, որպէս զի առատուած լիցի
ձեզ յերկինս՝ պատերազմողաց, և զԹշնամիսն վա-
նեցէք առաջի ձեր։

Ա՛յլ

Պատուէր տամք և քարոզեցողիդ և ոչք՝ թէ վա-
ճառուիցուն նաւեքք գնել և վաճառել և առ-

արուեստասուտ, զի ուղղութեամբ տանիցէք ըզկեանս ձեր և անարատ քաղաքավարութեամբ։

Եւ մի՛ ոք խաբէութեամբ և նենգաւորութեամբ վաճառեսցէ զստացուածս իւր անմեղ գնողաց. մանաւանդ՝ ստախօսութեամբ և սուտ երդմամբ զրահիկան և զանգէտան խաբեալ, զի՛ դատաստանին աւուր ընդ գող և ընդ յափշտակող դատեցից և այնպիսին. և առնու աստուած զբարեգործութիւն իւր և տայ զկեցոյցն՝ի նմանէ։

Եւ մի՛ եղիցի աւ ձեզ կշիռս մեծ և փոքր և չափ կրկին, զի պիղծ են երկոքեան առաջի տեառն՝ որպէս ասաց աստուածն, այլ արդարութեամբ և ղորդութեամբ վաճառեցէք զգործս ձեռաց ձերոց և գնութիւն վաճառուց ձերոց, զի մի՛ անէծք գկեցոյցն այրեսցէ զգոյս ձեր, այլ օրհնութիւնն աստ մոցէ՝ի տուն ձեր։ Եւ մի՛ արհամարհէք զչինականան իբրև զանգիտս յաղագս պարզամտութեանն իւրեանց, քանզի աւաւել սիրէ աճ զարդարասիրտ կեանս նոցա՝ քան զարտաւանութիւն և զխաբեբայն՝ի մարդկանէ։

Այլ տայք զարծաթն ձեր՝ի վարձու՝ ըստ մարգարէին, այնուհետև ոչք ներին՝ի բռնութենէ իշխողաց, և ուտէք զաղքատութեան վաստակս նոցա՝ի շահս վաշխուցն, այլ որպէս եղբարք կարեկիցք և օգնականք լերուք միմեանց։

Եւ զոր տայք նոցա փոխ՝ զայն միայն պահանջեցէք՝ի նոցանէ, և շահիցէք զվարձս իմ յայլ բազմապատիկ յանուանց կեանսն, որպէս և հրամայէ քրիստոս՝ ոչ միայն առանց վաշխուց տալ, այլ թէ ուրեք այ-

նոցին՝ յորոց ակն ոչ ունիցիք առնուլ ։

Վասն յաճեռնայն գոյից ձերոց տուք ողորմութիւն կարօտելոց և աղքատաց, զի այնու արբեցի առնային ինչ ձեր և առնուցուք զիմոխարէն ի քէն յաւուրն գատաստանի ։

Ը. Երկրագործս և համօրէն ժողովրդականաց ։

Լաւարուք և երկրագործք և համօրէն ժողովրդականք զիարդ պիտի պատուիրանին ոյք՝ զոր աւանդեմք ձեզ ։ Որոց մնանելոյ առաւել պիտանացու է զձեզ հոգևորական առ ի բժշկութիւն ոգւոց, զի և զոմանք առողջանայցէք ի մեղացն հիւանդութենէ ։

Որոյ աղաչեմք զձեզ, մի՛ անցաւոյ կենացս հեշտութեամբ մարմնոյ զյաւիտենական հեշտութին հոգւոց՝ զոր յաղթայութեանն երկնից վայելեն սէրք կորուսանէք ։

Այլ զի տագնար էք ոյք՝ որպէս առաքեալն, և հոգի ոյ բնակեալ է ի ձեզ՝ միրտութեամբ առազանին, մի՛ ապականէք պղծալից պոռնկութեամբ և շնութեամբ զտաճարդ ոյ՝ որ են հոգիք ձեր, զի մի՛ ապականեացէ զձեզ աստուած ի գատաստանին աւուր հրով զեհենին, որպէս և զրէ Պօղոս ։

Այլ մի՛ արբենայք գինեաւ՝ յորում զեղխութիւն է և յիմարութիւն է, որ է մայր պոռնկութեան և սմա պղծութեան և անիրաւութեան և վիճման և աղտեղի բանից անտրգանաց, յորմէ և ապաշխարութիւնք կինին, զի մի՝ արտաքս անկանիցիք յաղթայութենէն

ալ ժառանգութենէն ընդ սպանողս և ընդ չարա-
գործս՝ ըստ առաքելական բանիցն։

Եւ թէ ոք ի ձէնջ մեղաւ այսոքիւք ալ և կամ
այլ ինչ յանցանօք, մի՛ կացցէ հանապազ ի նոյն
աղտեղի սովորութենէն մինչև ի վախճանին օր, այլ
ի ձեռն խոստովանութեան և ապաշխարութ քա-
հեցէ զյանցանս իւր, և գործեսցէ յայսմ հետէ
փոխանակ չարին զբարիս։

Վարձեալ՝ մի՛ զլեզուս ձեր առնէք գործի սատա-
նայի ի ձեռն չար և դառն յիշոցաց, մանաւանդ որ
զհաւատս և զհոգիս անարգեն և զմկրտութիւն ա-
ւազանին և զմկրտիչ քահանայն և զերես և զբե-
րան, որ քան զուրացութիւն և զթլատուէ մեծ
են այս յանցանք, զի այլազգիք՝ որ ուրանալ ասեն
քրիստոնէին զհաւատն, զայծ ոչ ասեն անարգել։

Իսկ այս՝ որ զհաւատն անարգէ, ոչ զմարդ ա-
նարգէ, այլ զաստուած, զի հաւատս ամենայն աճա-
պարի աստուած է, և որ զմկրտութենն և զմի-
կրտիչ քահանայն անարգէ՝ աստ հոգին սուրբ է ա-
նարգութիւնն այն, զի նովաւ ծնանին մկրտեալքն
աստուածանան։ Եւ որ զհոգի մարդոյ և զերես անար-
գէ, նոյն աստ աստուած վերանայ հայհոյութիւնն,
զի հոգին յայծ է միտն, և երեսն պատկեր է այ,
նոյն և բերանն ընդունող է մարմնոյ և արեանն
քրիստոսի։

Եւ արդ՝ մի՛ տրտմեցուցանէք զհոգին սուրբ այ
այսպիսի զգալիք և աղտեղի բանիւք, զի մի՛ հեռա-
ցի ձեզ հոգին՝ որ բնակեաց ի ձեզ յաւա-

զանին, և փոխանակ մոցէ և բնակեսցէ ՚ի սիրտս ձեր հոգին սատանայի։

Վարձեալ՝ և զայս պատուէր առ հատարակ ամենայն հաւատացելոցդ աւանդեմք, զի զմանկուձեան ձեր երկիւղին այ անուցանիցէք, խրատելով զնա ՚ի մանկական տիոց լինել ածաւէր, ողորմած, աղօթասէր, և ուսուցէք նոցա զբանս աղքից, և սատեցէք չսովորել ՚ի խօսս աղտեղիս և ՚ի յիշատուխիեան, զի ՚ի մանկուձեան ժամանակի սառել անկի խրատս ծնողացն ՚ի միտս մանկանցն անջնջելի յիշատակաւ, ընդ որում և վարձս բարեաց ընկալջիք փոխարէն ՚ի քրիստոսէ։

Ո՛ւ զկնի ամենայն բարեաց զսէր առ միմեանս կալջիք, և առ աղքատս և մերկս և հիւրս և բանդեալս և հիւանդս՝ զկարեկցուխիեն և զողորմուխիեն, որով արքայուխեանն լինիջիք ժառանգորդք ՚ի քրիստոս յիսուս։

Ը. կանոն դասու։

«Պատուէր առաք և կանոնս սրգի պարկեշտուխեամբ և բարեձևուխեամբ լինել յաւելեալ՝ նի՝ որպէս և վայել է քրիստոնէից, և առաւել քան ոսկուով և արծաթով՝ ամօթխածուխեամբ և պատկառանօք զարդարել զանձինս ձեր։

Ո՛ւ մի ոք ՚ի գայթակղուխեան պատճառս մեղաց անմիտս ելնուասարդաց՝ այլապուճեսցէ զգոնեըրեսաց իւրոց օտար դեղօք, զի մի զկուր հոգին և զգան-

կացուլին ինքեան արկցէ ՚ի գուբն անօրէնութ ։

Եւ մի ոք նմանօղ լեցի օձին՝ գործել անօրենութեան լինելով սատանայի, զոր և կաւատեան անուանեն. զի որպէս նա եւայի ջամբեաց զպտուղն մահու՝ խաբէութեամբն, նոյնպէս և սա զանմիտ կանանց և զարանց տայ ձաշակել զպտուղն մահաբեր մեղաց՝ որ ՚ի սկիզբն քաղցր երեւէ անմտաց, և յետ կատարմանն դառն քան զլեղի. որ և զանէծս օձին ժառանգեցեալ այնպիսին կայ, զորոյ և զգործն ընտրացաւ ։

Վարձեալ՝ մի ոք ՚ի ձէնջ սատանայական կախարդութեան և աղանդոց դեղատուութեան զհետ երթիցէ, զի այլ մեղք ՚ի գործանէ ինեան, և այդ ՚ի հաւատն. քանզի կախարդութիւնն ՚ի սատանայէ է, և եթէ ոք ոչ նախ հեռանայ կայ և առնէ զինքն սատանայի պաշտօնեայ և երկրպագու, ոչ կարէ կախարդութիւնդն ։

Ո՛ մանուկ աղաչեմք ՚ի բաց լինել կայսերական մեծ և անհերքելի չարեաց, զի մի՛ ընդ սատանայի գատաստանի այնպիսին ՚ի հուր գեհենին, զի այս գործ կռապաշտութեան է և ոչ քրիստոնէից, զոր քրիստոս երանելի գալստեամբն իւրով յաշխարհէ զկռոցն մոլորութիւնն և զգործս նորին չարութեան,

Ընդ մի՛ ոք վերատին գործակից լեցի սատանայի՝ չար գործով կախարդութեան, և ընդ նմին այրեցի՛ ՚ի հուր գեհենին յաւիտեան ։

Այլ և այլ ինչ բազում գրել սա ձեզ կամ ասել ինչ պատուիրանաց սա ՚ի զգուշութիւն ՚ի մեղաց և յամենայն չար գործոց, բայց զոր պակասն է ՚ի զրոյս՝ ունիք սատանել ՚ի քահանայիցդ և կեպիս-

կոպտացել, որք կարգեալ են յՀՀ սեռէն հոգւոց
ձերոց՝ օր լսոս օրէ ՝նամնռսոել ձեզ զբանն ճըշ-
մարտութեան :

Ա՛ւ մեք աղաչեցուք զտէր, զի հանցէ ՚ի ձէնջ
զխրտքարեղէն, և տացէ ձեզ ՚ւերս մարմնեղեն,
լինել երկիր արգաւանդ, և պրկնաւորացուցանել
զսերմն բանիս ՚ի մեր յոգիս ձեր և տալ պտուղ բազ-
մապատիկ ՚ի ջահ երկրպագին, որով զուարթացին և
անտրտում երեսօք աստուցուք ՚ւատուկն գատաս-
տանի առաջի արդար գատաւորին, ահա ես և ման-
կունք իմ՝ զոր ետուր ցիս, և գատեցուք ընդ ա-
ջեացն ՚ի յաւիտենական կեանսն ձեօք հանդերձ ՚ի
քրիստոս ՅԻսուս ՚ի տէր մեր, ոմ է օրհնեալ յա-
ւիտեան . ամէն :

ՑԱՆԿ

Ցանկ յաւուկ վկաց Թղթոյս ընդհանրականի :

Ի՛ւ Յաւաջաբան առ ընդհերցողս : 1
Ա՛ւ Համօրէն Հայաստեա աշխա 1
Ա՛ւ կրօնաւորս՝ որ ՚ի վանորայս : 23
Ա՛ւ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց : 46
Ա՛ւ առաջնորդս եկեղեցւոյ՝ որ են յաշխարհի,
որ կոչին եպիսկոպոսունք : 52
Ա՛ւ գառս քահանայից : 62
Ա՛ւ իշխանս որ ըստ աշխարհի : 92
Ա՛ւ զինուորաց գառս : 104
Ա՛ւ քաղաքականաց : 106
Ա՛ւ երկրագործս և Համօրէն ժողովրդականաց : 108
Ա՛ւ կանանց գառս : 110

ԳԻՐՔ ՆԻԿԱՐՈՒՂՈՍԻ։

Պատճառ լինդրոյ միաբանութեան՝ Թագաւորին հռոմոց ի՛մանալի. և սրոյց կամաւորութեան հայոց՝ Դերսխի և Գրիգորիսի Թուղթքն՝ ղոր գրեցին առ միմեանս։

Արդարեն Դաւիթ՝ յոճախին երգան սաղմոսացն օրհնաբանէ, եթէ յիշատակ յաւիտենից եղիցի արդարն, և սաղմոն ասէ՝ թէ յիշատակ արդարոյ հանդերձ գովութեամբ։ Այլ առնելով զի Թէոդոս և հաստատական վախճանաւն փոխի յաստեացս, սակայն արձան միջնորհնաւոր ինքեան Թողու յերկրի զարժանի յիշատակի գործս, որով և յաղգս ազգաց անյատոյ գովաստանական երգով պատուի։

Ոչ այս տեսեալ միր՝ ի նուաղեալս ժամանակի հայոցս, որ ի ներքինեացն եկեղեցւոյ առաջնորդս, ոչ յաստղեմք առ յաստս Թողուլ զյիշատակ անուան նոցա սարսափելութեամբ բանի ի հանդերձեալ ժողովուրդն՝ զոր ունք զկնի միր լինելոցն, զի և զառցայգս ախորժեալ ի ձեռն կարծեմ պատմութիւն, քան զնախ եղելոցն համապատիւ նոցա արբոց. որպէս և զկնի առջոյ

ութեգաին , և յետ ձմերայնոյն՝ գարնանային օրուցն փաղցրութիւն :

Ա՛յսպէս և երանելի հայրս ՚ի նուաղեալ ժամանակի՝ յոյժ առատ ձմեռն մեզայ տիրեր ՚ի վերայ աշխարհիս, և մեզ թշուառութեան պաշարեր զմեզ սով և գերութեան, երևեցաւ ջահաւորեալ վարդապետութեամբ և լուսակրօն վարուք, և փառաւոր յաշխատուհն զմորիկ մեղացն և վերստին կանգնացոյց զմեզ ՚ի ձմերային մեռելութենէն յաՀաւն հոգևոր ջերմոյ հասակի կատարմանն քրիստոսի : Ա՛զգաս պաՀապան ՚ի ցեղէ սրբոյն Գրիգորի, երկրորդ յաջորդ առաքելական աթոռոյ կաթուղիկոսութեանս հայոց՝ յետ Գրիգորիսի վկայասիրին :

Ա՛նդրէ զերանելի վկայասէր ձգնաւորն քրիստոսի Գրիգորիս՝ յաջորդեաց Հանգզի նորին ձեռնադրեալ որդի և Հանգնաւն սէր Գրիգորիս, և էր թուական հայոց Հինգ Հարիւր քսան և չորս . ՚ի մանկական Հասակէ կարգեալ յաթոռն ՚ի վերին առաքելութեանն ընտրութենէն, որ և մոյց զերկայնն իւր վարժեալ ամ ածաղուն տասիւք զսէր Աստուծոյ, զորոյ բուռն եՀար բանս պատմողականս :

Ա՛յդ՝ երանելոյն Գրիգորիս յետ բազմաճոխ առքերութեանն ՚ի խոովութեան ժամանակիս դադարեաց ՚ի տաՀմանս Միջագետաց՝ առ աԻն եփրատ գետով, ամրացեալ ՚ի դղեակ բերդն՝ որ Հռոմկլայ կոչի, մերձ ունելով ինքեան զերկայնն Հոչակաւոր վարուք և խոհականութեամբ, երկոցունցն լցեալ զժամանակս և ալևորեալ Հերովք :

Յաւուրն յայնմիկ յառնէր խռովութիւն ի մէջ երկուց իշխանաց Հայաստենից այսպիսի օրինակաւ։ Կանգուն էին պատուով ի յունաց արքայէն սեաստոսութեամբ, և էին ընդ ծառայութեամբ և հնազանդութեամբ նորա։

Իշխանն՝ որոյ անուն (Ա)էոդորա, սէր գոլով ընդդէմ կողմանց վրաստացոց և բազում գաւառաց, և թէկն աճէր ընդդէմ Թագաւորին Հոռոմոց պէսպէս սպառնալեօ, մուծանել զերկիրս կուռ դաշինսն՝ որ ի միջի, և զհնազանդութի նորա։

Նոյնժամայն բարեպաշտ իշխանն ()շէն, որ և սա սէր գոլով գաւառաց՝ որ ի գահ կնքիկոյ, ունելով զանուանի զեղեակն ի թիկունս որոյ ընկերին վերադրելոյ մայրաքաղաքին սարսանի, հաստատմանէս մերնացեալ ի հնազանդութիւն արքային Հոռոմոց։

Նոյնժամայն իշխանն (Ա)էոդորա ի խռովութիւն շարժէր ընդ բարեպաշտ իշխանին ()շէնին վասն անբիծ հաւատոցն հաւատարմութեան՝ զոր ունէր առ Թագաւորն Հոռոմոց, և վասն այսր պատճառի ոչ սակաւ խռովութիւնք լինէր և հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանացն, մինչև հարկ լինել արքային կաթուղիկոսին առնուլ (Ա)րիգորիոսի շարժել զբանաւոր և զիմաստուն եղբայրն իւր զաղք եպիսկոպոսն զտէր Ներսէս՝ առաքել ի մէջ սոցա, որպէս զի խոհականութեամբն իւրով հնարեցի համոզել զսոսա ի խաղաղութիւն. որ և աշխատա՛ սիրաբար Ճանապարհորդեալ գայր առ նոսա, և զհաւատացեալ գործն արդեամբք կատարէր ի

Ջեռն իւրոյ միջնորդութեանն՝ անքակ սիրով կա-
պակցեալ զաստա ընդ միմեանս, և ինքն՝ի սէր հա-
րազատ ընտանեացն ղիմէր ։

Կ՚անգիր դուստր եղբօր ստրա էր օրինաւոր ա-
մուսին ( )ինի սեաստօսին, զոր և առեալ գերազոյն
իշխանն զարբանեակ արք եպիսկոպոսն՝ի Քանապարհ
անկեալ բերէր յիւրն սեպհական աւանն՝ ըստ ար-
ժանի պատուելով մեծարեալ՝ի մէջ հարազատ
ընտանեացն և կարևոր բարեկամացն, և օրհնեալ
զնաստա և զղղեակն և զամենայն բնակիչս գաւառին.
և ինքն դէմ եղեալ գնալ առ հարազատ եղբայ-
րըն իւր արբազան կաթուղիկոսն տէր Կ՚րիգորիոս ։
Ա՛ր յայնժամ պատահէր նոցա ըստ դիպուածոյ ձա-
նապարհին՝ի մամեստացւոց քաղաքն մտանել, ու-
ր էր թագաւորազարմ իշխան ոմն՝ դուքս կարգեալ
կողմանցս արևելեայց ։

Կ՚անգիր այս սովորութիւն է հնումց՝ ըստ շրջա-
գայութեան ամի զկարգեալ վերատեսուչ աշխար-
հաց հանել և փոխանակ նորա զայլ ոք առաքել ։
Ա՛ր այս այր էբրև զկորովամիտ և զինասուն յայն-
ժամ եկեալ էր՝ փեսայ գոլով թագաւորին, և
պատուով առաջին գոլ հեծելազօրացն՝ որ կոչի
յունարէն պրօտոստատաւտ, որոյ տեսեալ զխոհա-
կան առաջնորդն հայոց՝ մեծաւ ուրախութեամբ
ցնծաց, յայտ առնելով՝ եթէ իրիք տեղեակ ինչ-
նէր՝ի քաջութիւնէ պորոց և ուսանել զպատճառս պա-
տահելոյ մերոյ եկեղեցւոյ քրիստոսի ։

Յայնժամ կաւտարեան յիմաստս՝ ուրախութիւն ընդունէր զՀայոցաձն, և՛ի հարցումն բանի պատասխանւոյ հաւանեցուցանէր զբարեպաշտ իշխանն. որ և թախանձեալ զերանելին, զի զդաւանութիւն հայաստանեայց բանիւ առացեալն՝ գրով պարունակեալ տացէ նմա. որում հաւանեալ հաճոյական ընդրոյն կատարելով զհաւատով Հայոցաձն՝ զբեաց զմեծ դաւանութիւն հաւատոյ և զկարգս եկեղեցւոյ, և ետ՛ի ձեռս յատաջ ասացեալ բարեպաշտ իշխանին՝ այսպիսի օրինակաւ։

Գիր հաւատոյ խոստովանութեան հայաստանեայց եկեղեցւոյ գրեալ՛ի ձերսիսե ալիք եպիսկոպոսե յիսուքսիւ առաւն գրիգորի կաթուղիկոսի Հայոց, ՛ի խնդրոյ գերապատիւ փեսային ինքնակալ Թագաւորին Տրտմից Վանուէլի Աղէքի մեծի պատուստառաւն, յորժամ եկ յարևելս, և էր՛ի մամեստոյ մայրաքաղաքին՝ կիլիկեցւոց, ՛ի թուականութեան Հայոց՝ վեց հարիւր տասն և չորս։

Հանիւք պատճառաբեայ էին խոսելոյ՛ի լսելիս խոհեմագունիդ և ածասիրի անձինդ յաղագս մերոյ հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ Հայոցմանց՝ որ՛ի մէնջ, տալով պատասխանի։ Այլ քանզի զի խոսեցեալն իմաստք շրթամբք՝ ոչ կ բնաւորեն՛ի շտեմարանս յիշողականին ունալ անծախապէս, զմտաւորութիւնն ունելով հակառակ. վասնորոյ խնդրէք գրով արձանացուցանել զնոյն յատագս անաղօտ ունելոյ առ ձեզ յիշատակ բանիցն՝ որ՛ի մէնջ, զոր և տացուք սերտաբար սիրելիդ զիմաստութիւն՝ ըստ սահմանի գիտութեան մերոյ և տկարութեան և ժամուս փութոյ, հաճոյ և յայտ-

ին քանի՛ տակայն զբռավանդական պարագրելով հա՛ տատց մեր Ճշմարտութիւն և զեկեղեցւոց կարգա՛ ւորութիւն՝ ի հարցն ալբաց աւանդից ընկալեալ, որ է այսպէս։

Խոստովանիմք զաննեատութիւնն զերրորդութիւնն՝ զՀայր և զորդի և զսուրբ Հոգին, յերիս անձնաւո՛ րութիւնս բաժանեալ, և ի մի բնութիւն և յաՅ՛ ԹիւնՅ ժառալեալ։

Հայր անծին և անսկիզբն յաւուրջ քան զյաւի՛ տեանս, որդի ծնեալ ի բնութենէ Հօր՝ անախտ և անմասին նմա քան զժամանակս. Հոգին սուրբ բղխեալն ի Հօրէ՝ ոչ ըստ որդւոյ ծննդեամբ, այլ յաւուրջ եկեալ առնէ-տարար՝ ինքեան մնայոյ քըն՛ նելի օրինակն և յատկութենէ անգիտելի։

Եւ ոչ էր երբեմն Հայր՝ յորժամ ոչ էր ընդ նմին որդի և Հոգի, այլ որպէս Հայր՝ միշտ Հայր և ոչ յետոյ սոցաեալ զանուն Հայրութեան. նոյն՛ պէս և որդի՝ միշտ որդի ընդ Հօր իւրոյ միշանջե՛ նաւոր. այսպէս և Հոգին սուրբ՝ միշտ Հոգի սուրբ, անմեկնելի ի Հօրէ և յորդւոյ, մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք և մի արարչագործ զօրու՛ թիւն յերիս անձնաւորութեանս իմանի։ Այլ մե՛ ծութիւն և ոչ փոքրկութիւն, ոչ բարձրութիւն և ոչ խոնարհութիւն, ոչ տաւտելութիւն և ոչ նուաղութիւն, այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկիւղ պագութիւն սուրբ երրորդութեանն զաւանի, ո՛ րում գոյացութիւն չոչ էից եղեալ ածեսցի, երկինք երկնաւորօքն և երկիր երկրաւորօքս, երեւելի և

անեղական արարածք յաւաջին եղեալ արարչութ։

Նոյ յերկրորդութեան՝ ոմն յերրորդութենէն բանն Հօր որդին միածին կամաւ Հօր և հոգւովն՝ առեալ առաջ հրեշտակապետութիւն Գաբրիէլի և յղով յուսոյն Աստուածամարիամու, ոչ նուազեալ ի ծոցոյ Հօր՝ ըստ ստուածային անապարագրելի բնութեանն, և ձգեալ յինքն յարենէ ամենամաքուր կուսին՝ ոչ ի զանգուածոյն ազամայ, միացեալ ընդ ածութեան իւրում անքննին և անճառելի խառնմամբ, և եղև յերկուց կատարեալ բնութեանց յածմայնոյ և ի մարդկայնոյ միանձնաւորութեամբ կատարեալ, անայլայլելի և անբաժանելի բնութեամբ, ոչ փոխեալով մարդկային բնութեանն յաստուածային, և ոչ աստուածային անապարագրելի բնութեանն ի մարդկային, մնացեալ ամենայնիւ զոր էր և յաւիտեան կայ։

Ոչ իբրև խառնի ընդ մարմնոյ անմարմին բանն, և միացուցանէ ընդ ինքեան զմարդկային բնութիւնս, այլ միացուցանելով զիւր խառնմամբն և միաւորեալ ոչ փոխեալ կամ այլայլեալ ունել ի միաւորութեան. ըստ որում և ոչ հոգի և մարմին մարդիկան, թէպէտ և զերազոյն քան զօրինակն իւրեանց ունիցին զհաւասարութիւնն, որպէս ընդ արարիչ և ընդ արարած զոր հաւասարութիւն. այլ միաւորեալ զմեզս ընդ իւրումն՝ անհատանելի յեղա-

նախա՝ և ճնացեալ անվհատ առօրն և առեալն, ոչ ընդունալապէս՝ որպէս օր և ջուր յաման, զի յատուկ եւանելն դատարկանայ, այլ բնաւորապէս ճնացեալ ՚ի վեր քան զբան՝ անբաժանելի և անշըփոթ ճառութեամբ, և՚ առնլով զբնութիւն ազգայ՝ ոչ զոր յանմեղութեանն և՚ ի դրախտին, այլ զոր յետ մեղանացն և ապականութեան. զի և կոյսն Մարիամ՝ յորմէ մարմին առ քրիստոս՚ ի մեղանչական ազգայ բնութենէն էր. սակայն միաւորելով ընդ բնութեանն աստուծոյ, մեղանչական՝ նկն եղև անմեղ, և ապականացուն՝ արտաքոյ անցանելի և ապականութեան կրից. որպէս և հրաշ հաւելի նուիթք՝ յորժամ ընդ հրոյ միանան, ժանգ ապականութեան եթէ ւիցէ՚ ի նոսա՝ ծախի. իսկ բնութենն մաքրելով յապականութենէն՝ անծախելի ճոպ, զի որոյ սկիզբն անապական է, զի առանց սերման յանապական կուսէ էր ծնունդն, և կատարումն՝ անապական, զի մարմին նորա՚ ի գերեզմանին ոչ եռեց զապականութիւն, հարկ է՝ զի և՚ ի մէջ ժամանակին, որ ընդ ծնունդն և ընդ մահն՝ լինել անապական։

Այլ՚ ի հարկաւոր և՚ ի կամաւոր կրից ասեմք զի անապական, այսինքն՝ ի քաղցել և՚ ի ծարաւել, ի ննջել և՚ ի վաստակել, ի տրտմել և յարտասուել, ոչ ընդ ձգնարիտ և ոչ առաջք տան իմաստասիրացն, այլ յոկսման և յանգստեան կրից՝ խոստովանիմք ունել զանապականութիւն, զի էր մեր ինչ՚ ի նոսա նման մերում, և էր՝ որ՚ ի վեր

քան զմեռա, ըստ գրեցեալսն թէ՝ մնալոյ և՝ վճռ
քան զմնալոյ, և թէ՝ մնալոյ է, և ո՞ ծանիցէ զնա:

Ընդ ըստ մերում հատանելոյ՝ այսպէս եղեալ
միաւորութեան յեղանակ յարգանդի կուսին՝ բնա-
կեալ՝ ի նմա իննամսեան ժամանակաւ հինգ յա-
ւելեալ աւուրբքն՝ ըստ անդրանկութեանն, և այն
ոյ կարօղն էր՝ ի միում վայրկենի լինել կատա-
րեալ, օր ըստ օրէ աճմամբ զարգանայ, որպէս զի
խափանեացի այսոքիւք՝ առաջօք կարծելն զմարմե-
ղութիւնն:

Եւ ծնանի որպէս մարդ՝ ունճ մարդացեալ, զկու-
սութիւն ծնողին անապական պահելով, զի և ըն-
ծնունդն օրհնեացէ՛ յանիծից և զկուսութիւնն
նախատատուեացէ՛:

Անկատեցաւ ուխտօրեայ, զի զուխան՝ որ ընդ
հարան՝ կատարեցէ՛. և մեզ ուսուցէ զվկայա-
բեան սրտի հոգևոցսդէս:

Եւ ինքն՝ ի տաճարին քառասնօրեայ ընտ օրինացն յն-
ծայեաւն. զի զմարդկային բնութիւնս ինքեամբ ըն-
ծայեացէ հօր՝ ի բարձունս:

Պատեաւ կերպիսու, զի զմայրաքաղաք կա-
պաշտութեանն գարձուսցէ՛ յաստպաշտութիւն. և զնո
կատարեցէ՛ յօժարութեամբ վախճել ընդ նմա հա-
ւատացեալք:

Եւ ընկեցաւ յաշխարհի ոմն երեսուն աղքատու-
խոնարհութեամբ, ծառայեալ զնծուխն, զի զմեզ ձոխա-
ցուցեալ բարգաւացուսցէ՛, յորժամ նորին ձանա-
պարհին լինիմք հետուօղք:

Նման ի յորդանան ի լուսոյ երեմիոյ ամաց յայտնելով զիմաստ աստուածութեան իւրոյ վկայութեամբ հօր, թէ զա է որդի իմ սիրելի, և հոգոյ գալոյ նատանակերպ իջմամբ : Ա կրտեցաւ ի յովհաննէ, զի զջուրսն սրբեսցէ, և զնոութիւն մեղացն կղմեսցէ ի նմա, և զհոգևորականն տացէ մեզ միշտ աստիճան, ըստ վկայելոյն յովհաննու, թէ՝ նա միշտ տեսցէ զձեզ ի հոգին սուրբ և ի հուր :

Պահեաց քաւանօրէայ աստուածն երկրորդն առաքեալ վասն աստիճանի ազատմանն, զի ոչ պահեաց. և յաղթեաց երիւք փորձութեամբքն յաղթողին մատուկեան :

Եւ յետ այնորիկ ասաց զծածուկ աստուածութեան իւրոյ զօրութիւն յայտնի արար աշխարհի՝ զհաս հալածելով, զհիւանդս բժշկելով, զկաղս զբնացուցանելով, զմեռեալս յարուցանելով, ի ծովս երթալ ի ցամաքի գնալով, ի ստակս հայոց զբազումս կերսիրելով, զջուրս ի գինի և զկաս ի լոյս գարձուցանելով, և զլոյս աճմութեան իւրոյ զծածկեալն իբրև վարագուրս ընդ մարմնոյն՝ յայտնեաց աշակերտացն իւրոյ ի Թաբօրական լերինն դահճան զյարուցեալն՝ ոչ զինքն ծանուցանելով կենդանեաց և մեռելոց՝ իշխանութեամբ կոչմամբն մովսէսի և եղիայի : Զայդ այնուհետև կատարեալ յԵՄ ի հոգին սուրբ և ի հուր : Զոր ոչ ոք կարէ ասել զիւրն օրինակ և մարգարէիցն կատարեալ եկեալ : Ասաց ի վերայ իշոյ և յովհաննէ՝ օրինակ եկեղեցւոյ հրէից և հեթանոսաց : Կատարէ զդատ

կըն ըստ օրինացն, զի զՀինն ՚ի նորս և զտուեըն ՚ի
ձշմարտութիւնս փոխեացէ :

Ւ ուանայ զուտս աշակերտացն, զի զնախահօրն ո՞
ուից՝ որ ՚ի ծառն գիտութեան ընթացից, մայքրես՞
ցէ զյանցանս :

Տայ զմարմին իւր կերակուր կենաց և զարիւն
իւր ՚ի քաւութիւն մեղաց, զի որք առաջին պտղոյն
ճաշակմանէն մահացուք, զայսուհետ ճաշակելովն կեն՞
դանարուք :

Ւ ղօթէ իմով բնութեըս առ Հայր վասն իմ, զի
յառաջինն դարձուսցէ ՚ի փառս, և զի տացէ օրէ՞
նակ աղօթել և մեզ ՚ի փրկութեան մերում :

Տրամեցաւ և արտասուեաց ուրախութ պատճա՞
ռըն երկնաւորաց և երկրաւորաց, զի բարձցէ զնա
արտօսր յամենայն երեսաց՝ ըստ եայեայ :

Ւրկեաւ, զի զերկիւղն լուծցէ զմահու : Ւ յու՞
նեցաւ, զի զքէրան երեսացն ադամայ ջնջեսցէ :

Ւ ըլտակեցաւ, զի հարցէ ուժգին զթշնամին :
Ւ երկացաւ, զի զամօթոյ ծածկոյթ նախահօրն պա՞
տառեսցէ : Ւ տրբ զլեղին, զի զդատաստութեան մե՞
ղացն ճաշակն քաղցրացուսցէ :

Ւ նեեռեցաւ ՚ի խաչին, զի զմեզ արձակեսցէ ՚ի
կապանաց, և շնորհեսցէ փայտ կենաց փոխանակ
փայտին մահու :

Ւ երեսս իշխանաբար մարդկային մահկանացու
բնութեամբս, և ունց կենդանի ուծային և անմա՞
հական բնութեամբն : Ւ՚ն ոմն մեռեալ և ոմն կեն՞
դանի՝ ըստ բաժանողացն, այլ մի և նոյն անձնա

ւորութիւնն և մի քրիստոնյա չարչարուիր և մեռա-
նէր մահկանացու մարմնովն՝ որ ի միջի, և կեն-
դանի էր անմահ և կենդանարար ածութեամբն՝ որ
ի հօրէ. որպէս և ասէն աթանաս ասէ՝ թէ մահկա-
նացու մարմինն ոչ վեսաեաց զանմահ ածութիւնն,
քանզի անպէտ էր, այլ միայն մահասանել և ինքն
անախտ՝ անմահին զօրութեամբ, ևս յետ սակա-
ւուց ասէ՝ թէ մահ մարմնոյն եղև հանգոյակցին
մահկանացուացս։

Ա՝ յայ և մեք խոստովանիմք աստուած և մարդ
զքրիստոս, ոչ բաժանելոյ աղագաւ զայս ասեմք,
մի՛ լիցի, զի նա ինքն ե չարչարեալ և ոչ չարչա-
րեալ, ածային բնութեամբն անխոտորելի և ան-
չարչարելի, իսկ մարմնովն չարչարեալ և զմահ ձա-
շակեալ։

Յաղագս որոյ՝ մարմին ոչ աւերեն ընդ, այլ ունէ՝
որ չարչարեցաւն, և այլ ումն՝ որ ոչ չարչարեցաւ։

Նայց ոչ այլ ոք է քան զնոսն՝ որ չարչարեցաւ
և զմահ ընկալաւ մարմնովն, զի նոյն ինքն անչարչա-
րելի և անմահական բանն լինել մարմին չարչարելի
յանձն էառ, զի չարչարանօքն փրկեսցէ զմարդիկ.
քանզի զոր ինչ մարդկեղէնն չարչարէր մարմին
բանին՝ զայն ընդ. նմին գոլով բանն յինքն վե-
բերէր, և լինէր յոյժ հրաշափառագոյն էր. Ո՛ի ին-
քըն էր՝ որ չարչարէր, և ինքն էր՝ որ ոչ չարչա-
րէր, չարչարէր չարչարեալսն, զի նա ինքն էր
չարչարէր մարմին, և ի նմին ի չարչարեալսն էր
ինքն առանց չարչարանացն անբաժանելի ի չարչարե-

ցեղոյ մարմնոյն. զի ասէ զոմանս՝ անչարչարելի էր բնութեամբ, սակայն ընդ չարչարելի մարմնոյն անբաժանելի միացեալ էր անմահմինն, և մահմինն ունելով մինչեան չանչարչարելի բանն ջնջիչ սակաւ-թութեան իւրոյ. զայսոսիկ ասաց աթանասիոս:

Ընդ նմին և մեք՝ անբաժանելի զաւանիւմք զաստուածութիւնն յետ մահուան՝ ի մարմնոյն և ի մարդկեղէն հոգւոյն, և յարուցեալ ի նմանէն էր և՝ ի ցերեկութեանն՝ մարմնոյն, աստուածութեամբն էր ընդ աջմէ հօր, և միասոք նստուս լի՛ էին երկինք և երկիր: Այ՛ր և հայր ընդ նմա յերկրի, որպէս և առաց, հայր իմ ընդի՛մս է, և ոչ եթող զիս միայն, զի ես ար հայր է՝ առագ է և արդի և հոգի, և ես ար արդի է՝ առագ է և հոգին և հայր, և ես ար հոգին առաքե՝ առագ է և հայր և արդի:

Ընդ՝ իջեալ ի գերեզման մեռեալ մարմնոյն և կենդանի՛ աստուածութեամբն՝ արար աւերումն դժոխոց, և յարուցեալ յերրորդ յաւուր՝ յարոյց ընդ ինքեան ի մեռելութենէն մեղաց զհոգիս մարդկան հաւատացելոց, և ես յոյս և մարմնոյ յարուցի՝ ըստ նմանութեանն իւրում ի յերկրորդ գալստեանն:

Այս յետ քառասնօրեայ աւուց վերացաւ յերկինս առ հայր՝ նովին մարմնով յանդիմանն առաքեցաւ, և նստաւ ընդ աջմէ մեծութեն հօր ի բարձունս՝ ըստ առաքելոյ, զայնց ե մեռոյ մարմնովն որով հաղթեաւ, զատել զկենդանիս և զմեռեալս արդարութեամբ, և հատուցանել իւրաքանչիւր զգործս:

Ա՛յժ՝ ոչ՝ յաղագս սրբոյ երկրպագութեանն և անօրհնութեանն, զրնաւոսի այս է մեր ճշմարիտ խոստովանութիւն հաւատոյ՝ զոր համառօտ բանիւ եդաք առաջի։

Իսկ որ ինչ միանգամ վասն կարգաց եկեղեցւոյ և ծոմից և պահոց և հարցմանց՝ զոր ոմանք ի ձերոց այլ ընդ այլոց կարծեօք՝ գործով ծանուցին ձեզ զմիմեանց, գրեցաք և զայս առաւել բանիւ՝ զարս ունիմքն և յորոց հրաժարեմք։

Արեալ էր առաջին թէ, ի յունվարի ի հինգն ոօնեն վաղիւն աւետեաց, և յերեկոյին ծննդեան, և ի մեռս վաղիւն՝ որ է վեց յունվարի, միջոցք թեանն քրիստոսի. և յայտնանէ ի ինչ ուղիղ, և է որ արուսեակ է ճշմարտութեանն, և է այսպէս։

Ի միում աւուր ոօնել մեզ զոն ծննդեան քրիստոսի և միջոցն ի վեցն յունվարի՝ ոչ ընկալաք յառաջին հարցն աւանդից, յայտ ուղիղ հին գրեալքս. իսկ եթէ ի հինգն ոօնեմք՝ վաղիւն աւետեաց ոօնեմք, լի՛ է այս ամենայն տոհմիկ։

Պանդխտ աւետեացն ոօն՝ ըստ մերում ի յեօթն տալիւն է. իսկ ծննդեանն ի վեցն յունվարի, եւ կատարած աւուրքդ յեռոյ քան զոր դուքն ոօնէք. զի ոչ հարկ էր ապա զերկուն ի միասին ոօնել անխորհրդաբար, քանզի ծննդեանն և միջոցքն ի միասին ոօնելոյ՝ բազում ունիմք վկայութիւն։

Նախ զի՝ յառաջագոյն սա եկեղեցիք սկսեալ յառաքելոցն այնպէս ոօնէին, և յեռոյ քան զոր

ոմանք վասն բեթղեհէմի և յորդանանու. քանզի ոչ կարէին ի մուտ աւուր յերկուսին ուխտան կատարել զօծման՝ հետ գոլով ի մէնեանց, և փոքր փոքր ածմամբ ընկալան և այլ եկեղեցիք զնոյնն. իսկ Հայաստանեայք՝ որպէս ընկալան ի սկզբան Վկայեցաք, անփոխուն կացին ի նոյն։

Վարձեալ՝ զի և աւետարանչին ղուկաս վկայէ այսոցիկ ճշմարիտ լինել, գլուխ ա. համար 8։ Պանզի զի պատմէ ի տօնի քառասնեանն՝ որ էր ի թշրինի ամսեան, և ի սեպտեմբերի քան և եօթն, մնանել քահանայապետին զաքարիայ ի տաճարն և արկանել խունկ և տեսանել զտեսիլ հրեշտակին և լսել զաւետիս յղութեան ամլոյն և կրել պատանձուն ելեալն յոչ հաւատալն. և ապա ասէ թէ՝ լցան աւուրք պաշտամանն նորա և գնաց ի տուն իւր. և տուն նորա ոչ յերուսաղէմ էր, այլ ի լեռնակողմին հրէաստանի՝ ուր զուղջոյնն եւ մահիմ եղիսաբեթի. և աւուրք պաշտամանն նոր էին՝ հինգ օր քառասնեան տօնի և եօթն օր տաղաւարտ տահարացն, որ լինի երկուտասան օր։

Վասն՝ զերկուս տօնս զայսոսիկ կոչէ աւետարանչն աւուրք պաշտամանն քահանայութեանն զաքարիայ, զոր ի մէնեան տօնէին ըստ օրինացն, որ լեալ կատարեցաւ՝ գնաց տէր ի տուն իւր, և ի թշրին քան և երկու և ի հոկտեմբերի լինն եղև յղութիւն եղիսաբեթի։

Վասն՝ զոր ի քան և հինգ մարտի կատարեն զտօն աւետեաց կուսին, զյղութենէն եղիսաբեթի ի

Թշնամի՝ ոտան առեն յառաջխաղացութեան պատրաստմանն
զաքարկայ , որոց ոչ վկայէ աւետարանիչն ղուկաս ։

Խոկ որք՝ ի յեօթն ապրիլէ ուօնեն զաօր աւե-
տեացն , և յետ երկոտասան աւուրց պաշտաման նոր
առեն զյղութիւնն եղիսաբեթի՝ ի թշնամին քսան և
երկու տան վերադրելոցդ , որում և վկայէ աւե-
տարանիչն ։

Ի՝ և երկրորդ վկայութիւն այսոցիկ ըստնորում
աւետարանչին պատմութեանն , այն զի՝ առ թէ
յետ էր առնց երեանից սկսեալ՝ ի ծննդենէ ան-
առ , և հարկ լինի ըստ իմաստուն և ուղիղ մտաց
՝ի նոյն թիւ առնց եկեալ՝ յորում և ծնաւնդն՝ի
վեցն յունվարի հանդիսիլ , և մկրտութեանն ա-
ւուր յետ երեանից առնց , թէպէտ և պատկեր ա-
ւուրն ոչ նամանատիկ ։ Ի՝ և այլ ևս բազում առել
վասն տալին , այլ առկաւ շուտ է իմաստոյդ , քանց
եթէ այսպէս և եթէ այնպէս՝ ի վատ ոչ կատարեացին ։

Ո՝ երգս սրբոյ հոգւոյ ուճ-ուճնին՝ գրել էր՝ի թըղ-
թի սուտ թէ ոչ առեալք յեկեղեցիս մեր . և այս ամ-
բաստանութիւն ամենևին անմիտ է՝ի շշմարտութենէ .
զի այնքան պատուի՝ի մէնջ արժանաւորն պատուոյ
յերկնաւորաց և յերկրաւորաց միայն ոչ մարիամ
մինչ զի զբանս նորա ոչ՝ի լուր առնուն ընդ երից
մեռանկանցն և ընդ մարգարէին՝ ասելով երջանիք բա-
նէց , այլ՝ի կիւրակէս միայն և՝ի տօնս տէրունա-
կանս , որպէս և որք՝ի ձերոց տեղեակ են եկեղե-
ցականց կարգաց մերոց՝ հաստս առնեն զձեզ ։

Վասնզեալ՝ և՝ի թղթի աստ գրեալ էր վասն մեր

և այս ինչ, եթէ ոչ բնութիւն զաւանեն քանին և մարմնոյն, յորմէ առյուծանալ առնէ ՚ի միջոջ ամբաստանութեան, և այս յոքունց քանից կարօտանայր պատասխանութեան:

Ասեմք ոչ բնութիւն ՚ի քրիստոս, ոչ շփոթմամբ ըստ Նեստորի, այլ ըստ Աւետիքեայ, զոր ընդդէմ Նեստորի ընդդէմ ՚Աբեղայ ցոյց, զոր ՚ի գիրս պարտականացն առ ընդդէմ ՚Աբեղայ, եթէ ոչ է բնութիւն քանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին. և հարս կոչէ զաթանասի՝ ոս և որ յառաջ քան զնա: Այլ ոչ ըստ չարախոսացն կարծեցաք զերկուց բնութեանն կամ յերեւոյն կամ այլայլութիւն արկանելով ՚ի միաւորութիւնն քան՝ ոչ առեալով զմարդկութիւն, այլ զերկուց բնութիւն, ոչ շփոթմամբ, այլ զմարդ ՚ի քրիստոս, որ է ուղիղ և խոստովանեալ ՚ի միջոջ, է և մերս ոչ բնութիւն առեալն զոյգ և նման, և ոչ հերձուածողական կարծեաց աղագաւ: Այլ յայտ յայնմանէ է, զի յորժամ բանն նիւթ խօսիցէ վասն նորին երի՝ ոչ ՚ի միոյն միայն դարձուածք, այլև զերկուցն յատկութիւն ցուցանեմք, որպէս և չարչարանացն և մահուն վերստացեալքն յայտնի են ՚ի մերոյն Աթանասէ, այն զի առ ասէ թէ՝ աստուածդ գոլով բանն՝ անչարչարելին էր բնութ, սակայն ընդ չարչարելի մարմնոյն անբաժանելի միացեալ անմարմինն. և որ այսպիսիք՝ են բազումք: ՚Ի միջոջ ոչ բնութիւն ոչ վասն այլ իրիք առ ՚ի միջոջ, այլ յաղագս անբաժանելի և անձառ միա-

ւորութեան բանին և մարմնոյն։

Զայս յերկուս բնութիւն ասելոյն՝ յորժամ ոչ վասն բաժանման լինին առաջեալքն՝ ըստ Նեստորի, այլ վասն զանշինութիւնն ցուցանելոյ ընդդէմ չարափառացն Եւտիքեայ և ապողինարի՝ ոչ վախչիմք։

Այլ զոր օրինակ Հոգի և մարմին մարդոյ՝ են այլ և այլ բնութիւնք, վասն զի ոմն երկնային է և ոմն երկրային, ոմն երեւելի և ոմն աներեւոյթ, ոմն ժամանակեայ և ոմն անմահ, սակայն յետ միաւորութեանն՝ ոչ բնութիւն ասի մարդն և ոչ երկու, և ոչ ոչ բնութիւն ասելովն շփոթումն իմանի՝ ի մարդն, կամ Հոգի միայն կարծել զնա կամ մարմին միայն։ Այսպէս և քրիստոս թէպէտ և ոչ ասի բնութիւն, ոչ շփոթման ազագաւ են առաջեալք, այլ վասն անձառ միաւորութեանց երկուց բնութեանցն ընդ միմեանս։ զի թէ այսպէս ոչ էր, հարկ էր ասել ոչ երկու բնութիւն միայն, այլև երիս բնութիւնս իմանալ քան, երկուս զմարդկայինն՝ Հոգի և մարմին, և մի՝ զաստուածայինն։ Այլ յետ միաւորութեանցն բարձման երկուութիւնք բաժանման՝ ցըն՝ ըստ սրբոց վարդապետացն ասելոյ։

Այլ եթէ միութիւնն վասն անքակտելի և անբաժանելի միաւորութեանն ասի և ոչ վասն շփոթման, և երկու բնութիւնն՝ վասն անշփոթ և անայլայլելին լինելոյ և ոչ վն բաժանման, երկայքանչիւրքն՝ ի սահման են ուղղափառուե։ Վարձեալ՝ գրեալ էր՝ ի գիրս՝ի բուսաբեր ձիթոյ՝ զոր շուշմայ անուանեն, լինել միութիւն մերոյ և ոչ՝ ի ծառոյ ձիթե-

նեաց ։ Ա՛ր այս վիրաւոր, և պատճառն ոչ այլ ինչ
այլ զի ՚ի հայաստանեայց աշխարհն ոչ էին ձիթենիք
վասն ցրտութեան օդոյն, հարկ եղեւ զայն ինչ ձէթ՝
որ գիւտ է յաշխարհն, ՚ինդիւթ առնուլ միւռոնի,
և ոչ ինչ վնաս հոգևոր տեսանի յայսմիկ ։ Ո՛չ
թէ նուիրեցին էր զօրութիւն, զայն նուիթ միայն ար-
ժան էր խնդրել՝ յորում ամենայն ինչ սպզբունն
գոյր ՚ի նմա, ապա թէ քահանայական օրհնութիւնն
և աղօթքն միացուցանեն ընդ նուիթ ձիթոյն զնա-
յին շնորհն, ոչ ինչ է տեսանելութիւն կամ պա-
կասութիւն, եթէ ՚ի պղտոյ ծառոց լիցէ ձէթն և
եթէ ՚ի բուսոց։ Ասպէս և արեանն քոյ նուիթ գի-
նին, յորոց և լիցէ գունոց՝ ընդունելի է, եթէ սեա-
եթէ կարմիր և եթէ սպիտակ ։

Ա՛յր ՚ի գիւտ տացեալ և վասն սրբոց պատկերաց՝
եթէ ոչ ընդունին հայք ամենևին, և որ յայտնիկ
է ձշմարտութիւնն՝ յայտնի ցուցանեմք ։

Ի հակառակութենէ անտի՝ որ ՚ի մէջ երկուց
ազգացս է, բազում չարիս սերմանեաց սատանայ,
որպէս առ ոմանս ՚ի տգէտ ժողովրդոց մերոց զպա-
կերաց սրբոց զանընդունելութիւնն, ոչք ՚ի մէնջ
դարմանին այնպիսիքն, նա և նզովս ՚ի վերայ դնեմք
ոչք յանդգնին հայհոյել ։ քանզի մեք՝ ոչք զատ-
նորդականաց ունիմք զատուիճան, ընդունիմք և ե-
կրպագեմք պատկերի տնօրէնութեան փրկչին մերոյ,
այլև զամենայն սրբոց պատկերս՝ ըստ իւրաքանչիւր
կարգի պատուեմք, զորս յեկեղեցիս մեր նկարեմք
և ՚ի պատարագամատուցի հանդերձս, և պատու-

հասեալ ըմբերանեմք զոչ ընդունողան ՚ի մերոց զագէտան և զանխոհեմն ։

Կրեալ էր և զայս ինչ թէ՝ զամենայն խաչս բևեռեն , և այս ոչ միայն քանզի զոմն ՚ի միաւորս նիւթոց են , որպէս զսակեղէնս և զարծաթեղէնս և զայլս՝ որք ոչ երկու ՚ի վերոյ միաւորց են եղեալք , ոչ բևեռեմք , նաև զվայտեղէնան՝ զի չերկուցեն , հարկ է երկաթեղէն բևեռօք պնդել , զի մի ՚ի հողմոց կամ յայլ ինչ պատճառէ՝ բաժանեալք ՚ի միմեանց՝ անկցին , որպէս և նոյն նախ առաջին խաչն՝ յորում քրիստոս բևեռեցաւ , իմանի երկուցն ՚ի վերոյ միմեանց գոլ , զի բաւական լինի զի բառնալ զմարմինն և ոչ քակտել ։ Ոյժ՝ եթէ այլ ինչ խորհուրդ էր բևեռն , պարտէր զամենայն խաչն՝ որ յաւմ նիւթոց , բևեռել և ոչ զվայտեայսն միայն , ուր երկիւղ է քակտելոյ և անկանելոյ ։ Կարճեալ՝ եթէ ՚ի քարեղէն խաչս կամ յերկաթեղէն բևեռաւ , որ ոչ ՚ի յերկուց լինի մասանց՝ այլ ՚ի միոյ , ծանիցէ զի այն արարուածք տգիտաց են և հակառակախրատ , և ոչ ՚ի մէնջ հրամայեալ ։

Ա՝ յան երից արբասացութեանցն գրեալ էր , զի խաչեցար առեմք . և թէ մեք զարբասացութիւն զայս ՚ի դէմս երրորդութեան երգեմք՝ որպէս և դուք , չար և խորին մոլորութիւն էր ասել թէ խաչեցար , այլ զի առ միանձնաւորութիւնն որդւոյ բարբառիմք զայսոսիկ , վասն այնորիկ զմեծագոյն երախտիսն՝ որ ՚ի նմանէ առ մեզ եղեալ , դնեմք առա-

